ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2018Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ Կառավարության <<ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին>> 2004թ. դեկտեմբերի 30-ի N1929-Ն որոշման Տավուշի մարզի ցանկը ներառում է 1996 հուշարձան՝ 797 պահպանական միավորով:

Հաշվետու տարում իրականացվել է մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց պահպանական գոտիների անվտանգ պահպանության նկատմամբ վերահսկողություն:

Դրանց պահպանման նպատակով մարզի Պատմական միջավայրերի պահպանության ծառայության տարածաշրջանների ստորաբաժանումների հետ համատեղ ըստ հուշարձանների կազմվել է պատասխանատու կազմակերպությունների ցանկ /ուսումնական հաստատություններ, զորամասեր, պատանի կամավորականներ, ՀԿՆ-եր և այլն/:

Մշտապես ուշադրության կենտրոնում են գտնվում հանրապետական և տեղական նշանակության հուշարձանները, զոհված ազատամարտիկների, հայրենական պատերազմի, Հայոց Մեծ եղեռնի հուշահամալիրները, հուշարձանախմբերը:

Մարզի շատ համայնքներում հուշարձանների պահպանությունն ապահովելու նպատակով տարածքները գիշերային ժամերին լուսավորվում են:

Շարունակական աշխատանքներ են տարվում հուշարձանների և դրանց պահպանման գոտիներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ապօրինի գործունեությունները կանխելու և դրանց հետևանքները վերացնելու ուղղությամբ:

2018 թվականին հուշարձանների պահպանման գոտիների տարածքում խախտումների և չհամաձայնեցված այլ բնույթի աշխատանքների կատարման դեպքեր չեն արձանագրվել:

Միաժամանակ, ելնելով այն հարցի կարևորությունից, որ պատմական ժառանգությունը հանդիսանում է մեր մարզի և նրա ժողովրդի պատմության, մշակույթի և քաղաքականության վկայության հիմնական բաղադրամասը և այն ենթակա է ոչ միայն պահպանման ու հոգածության, այլև հուշարձանների ամրացման, վերականգնման, վերանորոգման և տարածքի բարեկարգման, համայնքների ղեկավարներից պահանջվել է առանձնակի ուշադրություն և մոտեցում դրսևորել պատմամշակութային հուշարձանների՝ եկեղեցիների, վանքերի, մատուռների, խաչքարերի և պատմական նշանակություն ունեցող մյուս արժեքների ոչ միայն պահպանման, այլև վերը նշված ուղղություններով տարվող աշխատանքներին:

Եկեղեցիների տարածքներում, մարզի տարբեր հատվածներում տեղադրված են տեղեկատու վահանակներ /որոշ տեղերում նաև Բրայլյան այբուբենով/:

Մարզի տարածքում գտնվող հուշարձանների հանրահռչակման նպատակով տեղադրվել են ուղեցույցներ, տեղեկատվական ցուցատախտակներ: Ստեղծվել է զբոսաշրջային քարտեզ, որտեղ ընդգրկված են մարզի պատմամշակութային

հյուշարձանները, մշակութային կազմակերպությունները, զբոսաշրջային երթուղիները:

Ապահովվել է մարզի տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձանց հանձնված տարածքներում գտնվող, ինչպես նաև օգտագործվող տեղական նշանակության հուշարձանների / այդ թվում՝ բնակելի տներ, շինություններ և այլն/ վերահսկողությունը, պահպանման նպատակով աշխատանքներ են տարվում համապատասխան պարտավորագրերի ստացման ուղղությամբ:

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության <<Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետները մշակել են մարզի Այրում քաղաքի Արճիս բնակավայրի <<Գերեզմանոց (18-19-րդ դդ.)>>, <<Քարայր-կացարան (ուշ միջնադար)>> և <<Հուշարձան ԵԱՋ (1970-ական թթ.)>> պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը: Նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվել են ինչպես համայնքների ղեկավարների կողմից, այնպես էլ մարզպետի և ՀՀ մշակույթի նախարարի կողմից:

Մարզի տարածքում գտնվող հուշարձանների հանրահռչակման նպատակով կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ, ուխտագնացություններ մարզի տարածքում գտնվող տարբեր պատմամշակութային հուշահամալիրներ, հուշարձաններ, տեսարժան վայրեր:

Այս տարի Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված միջոցառումները կազմակերպվել և անց են կացվել <<Ժառանգություն սերունդների համար>> խորագրով, իսկ նշանաբան է ընդունվել <<Գիտելիքների փոխանցում սերունդների միջև>> և <<Երիտասարդական առաջնորդություն>> թեմաները: Այդ նպատակով ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել մարզում գործող թանգարաններում և մշակութային օջախներում Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացման ծրագրերը և միջոցառումների համառոտ նկարագրությունները:

Դիլիջանի Գեղարվեստի ակադեմիայի մասնաճյուղի և Հովհ. Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոցի կողմից կազմակերպվել են բացօթյա պլեներային աշխատանքներ պատմամշակութային հուշահամալիրների տարածքներում:

Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված Հուշարձանների միջազգային օրվան <<Մեր ժառանգածը փոխանցենք ապագա սերունդներին>> խորագրով /ցերեկույթներ գրադարաններում, թեմատիկ ցուցահանդեսներ թանգարաններում, արվեստի և գեղարվեստի դպրոցներում:

Իջևանի քանդակների այգում հաճախ կազմակերպվում են մշակութային և բնապահպանական միջոցառումներ:

Մարզի տարածքում գտնվող հուշարձանների մասին պատմող նյութերը և նկարները տեղադրված են ինչպես մարզպետարանի, այնպես էլ համապատասխան համայնքապետարանների կայքերում:

Մարզում նշվել են Հայաստանի Հանրապետության պետական բոլոր տոները՝ <<Հայոց բանակի 26-ամյակին նվիրված միջոցառում>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո տոն>>, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Խաղաղության աղավնիներ>>, <<Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակ>>, <<Հեքիաթին հյուր>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Անկախության տոն>> խորագրերով տոները, նշվել է Մեծ եղեռնի 103-րդ տարելիցը,

երկրաշարժի տարելիցը, <<Ազգային նվագարանների փառատոն>>, <<Մշակութային ստուգատես>>, <<Աշնանային գունեղ մեղեդիներ>>, <<Մշակութային վերածնունդ>> և այլ փառատոներ ու զնգվածային միջոցառումներ:

Մարզի բոլոր կրթական հաստատություններում անց են կացվել <<Ոսկե աշուն>> խորագրով միջոցառումներ: Նշվել են եկեղեցական <<Սուրբ ծնունդ>>, <<Սուրբ Սարգիս>> /Երիտասարդների օրհնության օր/, <<Տյարնընդ առաջ>>, <<Սուրբ Զատիկ>>, <<Խաղողօրհնեք>> տոները: Կազմակերպվել և անց են կացվել <<Ծաղկի և երգի>>, <<Վերջին զանգ>>, <<Մեր մեծերը>>, <<Ասմունքի փառատոն>>, <<Ընթերցանության փառատոն>> խորագրերը կրող և այլ միջոցառումներ:

Կազմակերպվել և անց են կացվել՝

- միջոցառում-շքերթ՝ նվիրված Հայոց բանակի տարեդարձին /հունվար/
- նորակոչիկների երդման արարողություն զոհվածների հուշահամալիրում /հունվար/
- միջոցառում նվիրված հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրվան /18 մարտի/
- երիտասարդական ֆլեշ-մոբ նվիրված մայրության և գեղեցկության օրվան /ապրիլի 7/
- մոմերով երթ և հիշատակի միջոցառում նվիրված եղեռնի 103-ամյա տարելիցին՝ զոհվածների հուշահամալիրում /ապրիլ/
- եղեռնի տարելիցին նվիրված փաստաթղթերի և լուսանկարների ցուցահանդեսներ՝ Ազգային արխիվի հետ համատեղ
- Հաղթանակի 73-ամյակին նվիրված համաքաղաքային միջոցառում և զինվորական շքերթ հուշահամալիրներում
- թատերականացված տոնահանդես՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան /Մարզի երիտասարդական կազմակերպությունների և <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ի հետ համատեղ
- Հուշ-ցերեկույթ նվիրված Գանձաքարի հերոս Ռեմիկ Մարդանյանին
- միջոցառումների շարք՝ նվիրված Անկախության տոնին
- ամանորյա միջոցառումների շարք:

Նշենք, որ 2018 թվականի <<Մեր մեծերը>> ծրագրում ընդգրկվել են Միքայել Արամյանցը, Վահրամ Փափազյանը, Հակոբ Պարոնյանը, Զաբել Եսայանը, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրներն ու հերոսները:

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ <<Պահպանելով լեզվական բազմազանությունը և խթանելով բազմալեզվությունը՝ ի սատարումն Կայուն զարգացման նպատակներին>> խորագրի ներքո մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են բաց դասեր, գրական-երաժշտական երեկոներ, վիկտորինաներ, զրույց-զեկույցներ, ասմունքի, ընթերցման, երգի մրցույթներ, բեմականացումներ, ազգային սովորույթների, տարազների ցուցադրություններ և այլն:

2018 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կազմակերպվել և անց է կացվել պատմամշակութային վերածննդին նպաստող ավանդական <<Մշակութային վերածնունդ>> արհեստների և արվեստների համահայկական 6-րդ փառատոնը: Փառատոնն առանձնակի է իր ընդգրկվածությամբ՝ ներկայացված են ՀՀ մարզերը, Արցախը և սփյուռքը: Փառատոնին մասնակից են դառնում գորգագործ վարպետներ, ցուցադրվում են տարածաշրջանի կերպարվեստի, գորգարվեստի բացառիկ, նույնիսկ թանգարանային նմուշներ, ձեռարվեստի այլ ստեղծագործություններ՝ կավագործություն, խեցեգործություն, դարբնագործություն, փայտագործություն, ազգային խոհանոց և այլն: Փառատոնն ուղեկցվում է համերգային ծրագրով, որում ընդգրկված են ինչպես ՀՀ մարզերի, այնպես էլ Արցախի ու մայրաքաղաքի երգիչ-երգիչներ, երաժշտական համույթներ, անհատ կատարողներ և այլն:

Հունիսից-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում Դիլիջանում անցկացվել են մարզային, հանրապետական և միջազգային ավելի քան մեկ տասնյակ փառատոներ, համաքաղաքային հոբելյանական միջոցառումներ: Կազմակերպվել է Հաղարծին գյուղի 200-ամյակին նվիրված փառատոնը, որին մասնակցել է ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը, միջոցառումներ են կազմակերպվել նվիրված Խաչարձան և Աղավնավանք գյուղերի վերածնման 30-ամյա հոբելյաններին, Դիլիջան տեղանվան 474 –ամյակին, հայ ազգային պարի <<Ազգային ոգի>> դպրոցական փառատոնը՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Առաջին հանրապետության 100-ամյակին, նշվել է Գոշ գյուղի օրը: Առնո Բաբաջանյանի անվան <<Գլխավորը ծառայել Հայրենիքին>> միջպետական ռազմահայրենասիրական փառատոնի շրջանակներում կազմակերպվել է հայ-ռուսական նվագախմբի համերգը, <<Հայաստանի զարգացման նախաձեռնություններ>>/IDeA/ հիմնադրամի հետ համատեղ՝ ամֆիթատրոնում կազմակերպվել է <<Արշակի երգը>> ստեղծագործության պրեմիերան՝ ֆրանսիական ճանաչված Մարսելի <<Musicatreize>> անսամբլի և Ֆրանսիայի Ռադիոյի պատանեկան երգչախմբի կատարմամբ, միջոցառմանը ներկա էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժոնաթան Լաքոտը: Բացօթյա ամֆիթատրոնում կազմակերպվել է Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի թեմի <<Գավիթ>> թատրոնի ելույթը՝ սփյուռքահայ ուխտավորների համար, <<Արմենիա>> միջազգային պարային փառատոնը Ռուսաստանի, Լատվիայի, Հայաստանի պարային խմբերի մասնակցությամբ, <<Դիլիջանյան ամառ>> պարի փառատոնը՝ ավելի քան 50 խմբերի մասնակցությամբ /<<Մինորա,, մշակութային կենտրոնի հետ համատեղ/,

<<Մունդուս>> երաժշտական փառատոնը /կազմակերպիչներ՝ <<Հայ մշակույթի նվիրյալներ>> ՀԿ, <<Արմենիասեիսփեյն>> մշակութային ասոցիացիա, Դիլիջանի համայնքապետարան, Դիլիջանի համայնքային կենտրոն/ Ֆրանսիայի դրամատիկական ակադեմիայի շրջանավարտների <<Սարերի ափին>> պարային-երաժշտական ծրագիրը՝ հայկական մշակույթի յուրօրինակ մեկնաբանությամբ, <<Գունային ֆեստիվալ>> երաժշտական միջոցառումը՝ <<Arm Everst>> <<Cem – gg.>> կազմակերպությունների հետ համատեղ և այլ միջոցառումներ:

Ավանդական է դարձել Ենոքավան համայնքի վարչական տարածքում գտնվող <<Ապագա տուր>> և <<Յելլ էքստրիմ պարկ>> ՍՊ ընկերությունների կողմից նշված տարածքի հանգստյան գոտիներում զանգվածային միջոցառումների և փառատոների կազմակերպումն ու անցկացումը / օրինակ՝ <<Հայ բույս>> և այլն/:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և բոլոր եկեղեցիներում Գոհաբանական մաղթանքի ավարտին կատարվում է նոնօրհնեքի արարողություն:

2018 թվականին շարունակվել են գորգագործության, խեցեգործության ու բատիկի ուսուցմանն ուղղված ծրագրերը: Համապատասխան նյութատեխնիկական միջոցներ ձեռք բերելով՝ դպրոցներում իրականացվում է համապատասխան արհեստագործական խմբակային դասընթացներ, որտեղ երեխաները գեղագիտական դաստիարակություն ստանալու հետ մեկտեղ ձեռք են բերում մասնագիտություն և համապատասխան արհեստագործական գիտելիքներով նոր հնարավորություններ են ստանում լավագույնս ներկայանալու նաև տեղական, հանրապետական ու միջազգային ցուցահանդեսներում, մրցույթներում ու տոնավաճառներում:

Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցը մասնաճյուղեր է բացել խոշորացված համայնքի Հաղարծին, Թեղուտ, Խաչարձան և Աղավնավանք գյուղերում: Ս/թ. մարտին դպրոցը և աշակերտները մասնակցել են <<Մինորա>> մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված <<Դրուժբա-2018>> հայ-վրացական մանկապատանեկան ստեղծագործության միջազգային փառատոնին /Դպրոցը և մասնակիցները պարգևատրվել են գավաթներով ու դիպլոմներով/: Հունիսի 24-ից-հուլիսի 8-ը՝ Հայկական արվեստը /Դեկորատիվ կիրառական/ ներկայացնելու համար <<Իմ Հայաստան>> ծրագրերի շրջանակներում գեղարվեստի դպրոցի դասատու Արմինե Պողոսյանը մեկնել է Վաշինգտոն մասնակցելու <<Սմիթսոնյան ֆոլքլայֆ>> փառատոնին՝ ներկայացնելով հայկական մշակութային ժառանգությունը: Հուլիսին <<Գորիսը 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք>> միջպետական ծրագրին Տավուշի մարզը տաղավարով ներկայացրել է գեղարվեստի դպրոցը: Սեպտեմբերին Երևանի Հանրապետության հրապարակում մասնակցել է ցուցահանդեսով և պարային կատարումներով: Գեղարվեստի դպրոցում <<Հույսի կամուրջ>> կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է <<Ձեռք-ձեռքի>> մանկապատանեկան արվեստի 3-րդ ինտեգրատիվ հանրապետական փառատոնի համայնքային միջոցառումը: Դեկտեմբերին Երևանի Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտում Չեխիայի դեսպան Պետր Միկիսկան Գեղարվեստի դպրոցին և <<Լիդիցե-2018>> մանկապատանեկան ստեղծագործության

46-րդ միջազգային մրցույթում հաղթող ճանաչված 4 աշակերտներին հանձնեց դիպլոմներ և մրցանակներ: Դպրոցը արժանացել է նաև <<Վարդ>> մեդալի:

Մարզում պարբերաբար կազմակերպվել են մասսայական մշակութային միջոցառումներ ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների ուղեկցությամբ:

Ցուցադրություններ են կազմակերպվել թանգարաններում, արվեստի և գեղարվեստի դպրոցների ցուցասրահներում:

Մարզի բոլոր համայնքներին ուղարկվել է հանձնարարականներ բարբառների իմացության մրցույթ-փառատոնի անցկացման ընթացակարգի և առաջին փուլի կազմակերպման վերաբերյալ, այնուհետև կազմակերպվել է մարզային փուլ, որի հաղթողները խրախուսվել են:

Իջևանի քաղաքապետարանի մշակույթի տանը գործում է ասմունքի խմբակ, որտեղ սաները սովորում են հեքիաթներ պատմել նաև բարբառով, ինչպես նաև կազմակերպում են թատերական ներկայացումներ խմբակի սաների ուժերով:

Դիլիջանի Կենտրոնական գրադարանում հանրակրթական դպրոցների հետ համատեղ կազմակերպվել են ասմունքի ցերեկույթներ նվիրված Հ.Թումանյանին, Վ.Անանյանին, Մայրենի լեզվին և այլն:

Հաշվետու տարում մարզում կազմակերպվել և անց են կացվել <<Սասնա ծռեր>> և <<Սասունցի Դավիթ>> էպոսին նվիրված ամենամյա հանրապետական փառատոնի համայնքային և մարզային փուլերը, որի հաղթողները մասնակցել են ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում գտնվող <<Պերճ Պռոշյանի տուն-թանգարանում>> կայացած եզրափակիչ փուլին:

Դիլիջան համայնքի քաղաքային մշակույթի պալատի շենքային պայմաններից ելնելով /ենթակա է հիմնանորոգման/ գործում են միայն <<Սամվել Ղասաբյան և ընկերներ>> խումբը և փողային նվագախումբը, որը 2018 թվականին նորացրել է ծրագիրը, մասնակցել է Արտաշատում կազմակերպված փողային նվագախմբերի 14-րդ հանրապետական փառատոնին և համաքաղաքային բոլոր միջոցառումներին:

Կողբի մշակույթի կենտրոնի ենթակայությամբ գործող արվեստի դպրոցում կազմակերպվել է կարպետի հինման ցուցադրություն ավանդական կանոններով /Ամալիկ տատիկն իր փորձն է փոխանցել դպրոցի կարպետագործությամբ զբաղվող սաներին/:

Կողբի մշակույթի կենտրոնում սկսել է գործել երգի խմբակ, որի սաները հանրության առաջ ելույթ են ունեցել առաջին հաշվետու համերգով:

Իջևանի թիվ 5 մանկապարտեզի չգործող մասնաշենքում բացված արվեստի և արհեստի կենտրոնում ցանկացողներն առանց վարձավճարի և տարիքային սահմանափակման սովորում են ավանդական արհեստներ: Այստեղ գործում է գոբելենի,գորգագործության, կարպետագործության, կարուձևի, ասեղնագործության և փորագրության խմբակներ:

Դիլիջանի Երկրագիտական թանգարան-պատկերասրահում տարվա ընթացքում կազմակերպվել են ֆրանսահայ նկարիչներ Խ.Ժերանյանի, Էդգար Շահինի, Գառզուի ստեղծագործությունների ցուցահանդեսներ, Մարտիրոս Սարյանի ստեղծագործությանը նվիրված ինտերակտիվ միջոցառում, Շառլ Ազնավուրի հիշատակի ցերեկույթ, Հովհաննես Շարամբեյանի գեղանկարների ցուցահանդես, գրաֆիկայի ցուցահանդես <<MY ARMENIA>>: Թեմատիկ գրքային ցուցահանդեսներ

են կազմակերպվել Գրադարանների կենտրոնացված համակարգում նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին հանրապետության 100-ամյակին, Մեծ եղեռնի 103-րդ տարելիցին, Ղ.Աղայանի անվան գրադարանի 110-ամյակին: Հանդիպումներ են կազմակերպվել անվանի դիլիջանցիների հետ, հանդիպումներ վետերանների, հանդիպումներ ավագ և հիմնական դպրոցների ստեղծագործող աշակերտների հետ և այլն:

Իջևանի երաժշտական դպրոցում և մարզային գրադարանում կազմակերպվել են հոբելյանական միջոցառումներ՝ նվիրված գրող-հրապարակախոս Ռուբեն Սիմոնյանի ծննդյան 80-ամյակին:

Հաշվի առնելով Իգնատ Մամյանի գրական վաստակը՝ Նոյեմբերյան համայնքի ավագանին որոշում է կայացրել Նոյեմբերյանի քաղաքային գրադարանը վերջինիս անունով կոչելու մասին: Գրադարանը կվերանվանվի <<Իգնատ Մամյանի անվան Նոյեմբերյանի քաղաքային գրադարան>>: Գրադարանին հարակից տարածքում էլ կտեղադրվի մեծանուն գրողի կիսանդրին:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկերի թարմացման նպատակով ՀՀ Տավուշի մարզի համայնքների կրողների կողմից իրենց տարածքի ժառանգության վերաբերյալ նոր առաջարկություններով համալրված ցանկը՝ լրացված համապատասխան ձևաչափի: Դրանք պարբերաբար թարմացվում են՝ համալրվելով մարզում կենսունակ և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներով: Այդ գործընթացում կարևորվում է ժառանգություն ստեղծող, պահպանող և փոխանցող համայնքների, խմբերի և անհատների մասնակցությունը:

Իջևանի Քաղաքապետարանի աջակցությամբ գրող-հրապարակախոս Ռուբեն Սիմոնյանը գրել է Քարվանսարա-Իջևան ստեղծագործությունը: Գրքում ներկայացված է Իջևան քաղաքի ստեղծումը, տնտեսությունը, սոցիալական կյանքը, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Գիրքը սղագրված է և գտնվում է տպագրման փուլում: Տպագրվել է Լյուբիկ Չիբուխչյանի <<Իջևան մոլորակից իջած փրկիչը>> ստեղծագործությունը:

2018թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նախաձեռնությամբ և մարզպետարանի աջակցությամբ մարզի 35 գրադարաններ իրենց գրքային ֆոնդը համալրեցին <<Հայոց պատմություն>> բազմահատորյակի 5 հատորներով:

<<Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեջ են ընդգրկվել խոշորացված համայնքի Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք և Խաչարձան գյուղերի գրադարանները: Գրքային ֆոնդը 2018թ. տարեվերջին կազմում է 262181 կտոր գրականություն, որից գյուղական մասնաճյուղերում՝ 36523 կտոր: 2018թ. գրադարանային ֆոնդը ավելացել է 1399-կտոր գրականությամբ:

Այգեհովիտի ՍՄԱՐԹ կենտրոնում տեղի է ունեցել հանդիպում Երևանի գրողների միության նախագահ Ա. Ափինյանի, <<Նոր-Դար>> Համահայկական հանդեսի գլխավոր խմբագիր Ա. Ղումաշյանի, խմբագիր Ս. Ղազարյանի հետ: Հանդիպման ժամանակ հյուրերը գրքեր նվիրեցին Այգեհովիտի մշակույթի տան, Այգեհովիտի և Կայանավանի դպրոցների գրադարաններին:

Բերդի համայնքային գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նոր 350 գրքով:

Կողբի մշակույթի կենտրոնի ենթակայությամբ գործող գրադարանին 120 անուն գիրք է նվիրաբերել գրող- հրապարակախոս Աշոտ Աղաբաբյանը:

Փետրվարի 19-ին՝ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը, որը հռչակված է գիրք նվիրելու օր, մարզի մի շարք գրադարաններ համալրեցին իրենց ֆոնդը նոր գրքերով:

Իջևանի մարզային գրադարանի կողմից մարզի գյուղերի համայնքային գրադարաններին հատկացվել է զգալի գրականություն:

Դիլիջանի Երկրագիտական թանգարան-պատկերասրահի ֆոնդը 2018 թվականի ընթացքում ավելացել է 6-ով ՝ 4 գեղանկար Պ. Բայբուրթյանի, Քաջազնունու, Արթինի և Լիլիթ Զաքարյանի ստեղծագործությունները և 2 գրաֆիկական աշխատանքներ՝ Գառզուից: 2018-ի տարեվերջին թանգարանային ցուցանմուշների քանակը 5251 է: Տարվա ընթացքում ֆոնդերում պահպանվող 17 գրաֆիկական աշխատանքներ շրջանակավորվել են և ցուցադրվում են գրաֆիկայի ցուցասրահում:

Դիլիջան երկրագիտական թանգարանի ֆոնդերից հայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսներ են կազմակերպվել /այդ թվում՝ բացօթյա/ նվիրված Առաջին Հանրապետության 100-ամյակին, այդ թվում՝ մանկական ստեղծագործության ցուցահանդես <<100-ամյա Հայաստանը իմ աչքերով>> խորագրով, Եղեռնի 103-րդ տարելիցին, պատկերասրահի հիմնադիր Վանիկ Շարամբեյանին: Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի օրերին կազմակերպվել է ֆրանսիացի և ֆրանսահայ նկարիչների աշխատանքների ցուցահանդեսների շարք /Ժան Բատիստ Գրյոզ, Շահին, Ժերանյան/: Կազմակերպվել է ցուցահանդես-վերլուծություն՝ Հայրենական Մեծ պատերազմի մասնակից նկարիչների ստեղծագործություններից /Էդ. Իսաբեկյան, Արա Բեքարյան, Սուրեն Սաֆարյան, Սարգիս Մուրադյան/:

Մարզի 3 թանգարաններն էլ իրականացրել են <<Թանգարանային գիշեր>> խորագիրը կրող միջոցառումների շարք. ցուցահանդեսների բացում, հուշ-երեկոներ, հանդիպումներ, բաց դասեր, ֆիլմերի դիտումներ, համերգներ և այլն:

Գրադարաններում անց են կացվել Ազգային գրադարանային շաբաթի, Գրադարանավարի օրվա, Գրադարանային երեկոյի, Թարգմանչաց տոնի, Մայրենի լեզվի միջազգային օրվա, Հայոց ցեղասպանության 103-ամյա տարելիցին նվիրված դասախոսություններ:

Դիլիջանի գրադարանի սպասարկման բաժինը գրապահոցներից թարմացվել է հետաքրքրություն ներկայացնող և դպրոցական ծրագրային, մասնագիտական գրականությամբ, կազմակերպվել են թեմատիկ գրքային ցուցահանդեսներ:

Մատաղ սերնդի մեջ գրքի հանդեպ սեր սերմանելու և այն ամրապնդելու նպատակով մարզի մի շարք գրադարաններում կազմակերպվել և անց է կացվել <<Ընթերցանության փառատոն>>, որի մարզային փուլի հաղթողները մասնակցել են <<Ընթերցանության օլիմպիադա 2018>> մրցույթ-օլիմպիադային:

Մարզի տարածքում գործող գրադարաններում և թանգարաններում անց են կացվել գրքերի քննարկումներ, ընթերցողների հետ հանդիպումներ, գրքերի

շնորհանդեսներ, կազմակերպվել են ցուցահանդեսներ և այլ գրական-երաժշտական միջոցառումներ, բազմաթիվ կինոդիտումներ՝ ծրագրային գրականության շուրջ:

Այցելուների հետաքրքրությունը բարձրացնելու ուղղությամբ թանգարաններում կազմակերպվել են նոր ցուցադրություններ, Դիլիջանի երկրագիտական թանգարանում ստեղծվել է Դիլիջանի պատմության, հնագիտության, ազգագրության սրահը, որտեղ անց են կացվում նաև վարպետաց դասեր /գորգագործություն, կարպետ, ասեղնագործություն/: Թանգարանը համագործակցում է Գեղարվեստի պետական ակադեմիայի մասնաճյուղի և UWC Dilijan միջազգային քոլեջի հետ, կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, հաշվետու ցուցահանդեսներ: Կենտրոնական գրադարանում առանձին ցուցադարակներում ներկայացվում է նոր ստացված գեղարվեստական և մասնագիտական գրականությունը:

Ս/թ. Հայաստանի ազգային արխիվի Տավուշի մարզային մասնաճյուղի նախաձեռնությամբ Իջևանի պատմաերկրագիտական թանգարանում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված Անկախության 27-ամյակին. առանձին ցուցափեղկերով, փաստաթղթային նյութերի ու լուսանկարների տեսքով ներկայացվել էին հին ու նոր Իջևանը, նրա պատմությունն ու անցած ուղին՝ սկսած 1880թ. մինչև մեր օրերը:

Նոյեմբերյանի քաղաքային գրադարանում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ փոխվել, թարմացվել, լրացվել են գրադարանի բոլոր գրքային ցուցահանդեսները, դրվել են նորերը, կատարվել են նկարչական աշխատանքներ՝ ցուցահանդեսները բովանդակալից, գրավիչ և վառ դարձնելու համար:

Գրադարանում մշտական ցուցադրվում են Նոյեմբերյանի և Կողբի գեղարվեստի սաների աշխատանքները, որոնք պարբերաբար փոխվում են: Կազմակերպվել է միջոցառում-հանդիպում Նոյեմբերյանի դերասանների հետ նվիրված Թատրոնի միջազգային օրվան:

Նոյեմբերյան քաղաքի կենտրոնական գրադարանում շաբաթական պարբերականությամբ գործում է <<Նոյեմբերյանի ինտելեկտուալ կրթության ակումբը>> (ՆԻԿԱ), որտեղ ներգրավված է տարբեր մասնագիտության և զբաղմունքի տեր շուրջ 45 մարդ:

Մշակութային արժեքների պահպանման համար անհրաժեշտ պայմաններ են ստեղծված Դիլիջանի երկրագիտական թանգարանում: Ցուցասրահները ապահովված են համապատասխան ջերմային ռեժիմով /շենքը տաքացվում է լոկալ համակարգով/, գործում է օդափոխության համակարգ, անվտանգության համակարգ՝ տեսախցիկներով և անհրաժեշտ համակարգչային սարքերով: Ժամանակավոր ցուցադրությունների միջոցով թանգարանային իրերը հանվում են ֆոնդարաններից, ցուցադրությունից հետո՝ մշակվում և վերադարձվում պահպանման: Ավարտվել են թանգարանի հնագիտության, ազգագրության, Դիլիջանի պատմության բաժինների էքսպոզիցիոն աշխատանքները:

Մատչելի պայմաններ են ստեղծված Դիլիջանի երկրագիտական թանգարանի այցելուների համար: Համայնքի ավագանու որոշմամբ անվճար այցելությունների օրեր են սահմանվել բոլոր այցելուների համար՝ ամսվա վերջին երեքշաբթի օրը աշակերտների և նրանց ուղեկցող ուսուցիչների համար՝ ամսվա 2-րդ ուրբաթ օրը, Հայրենական պատերազմի մասնակիցների, զոհված ազատամարտիկների

ընտանիքների անդամների համար՝ բոլոր աշխատանքային օրերին: Թանգարանը միացել է դպրոցականների աբոնեմենտային ծրագրին /Անվճար այցելություններ/: Ժամկետային զինծառայողների այցելությունը նույնպես անվճար է:

Իջևանի պատմաերկրագիտական թանգարանը և պատկերասրահը գործում են անվճար հիմունքներով:

<<Գրադարանավարի օրվա>> կապակցությամբ մարզի գրադարաններում անց է կացվել ավանդույթ դարձած <<Ճանապարհ գրքով >> խորագիրը կրող երեկոյան ծրագիրը: <<Ճանապարհ գրքով>> ծրագրի նպատակն է ընդգծել գրքի, գիտելիքի, գրադարանների դերը, ընթերցանության կարևորությունն արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել <<Եվրոպական ժառանգության օրեր>> ծրագրին համապատասխան <<Մշակութային ժառանգության եվրոպական տարի. կիսվելու արվեստը>> համաեվրոպական խորագրի ներքո ՀՀ Տավուշի մարզում կազմակերպվելիք միջոցառումների համառոտ նկարագիրը: Միջոցառումներն անց են կացվել մարզում գործող թանգարաններում և մշակութային այլ կազմակերպություններում:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի և Հայաստանում գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի նախաձեռնությամբ Տավուշի մարզի Բերդ քաղաքում և Ներքին Կարմիրաղբյուր գյուղում իրականցվում է <<Օգնություն անտեսված և անապահով երեխաներին>> ծրագիրը, որի շահառու երեխաները սոցիալապես անապահով ընտանիքներից են: Բերդում ծրագրի շահառու 50 երեխաներ իրենց ազատ ժամանակն անց են կացնում քաղաքի նախկին գրադարանում, որտեղ ավագները դասապարապմունքով են զբաղվում, իսկ փոքրերն էլ առանձին նկարում են, գործում, կարում, երգում, արտասանում: Ներքին Կարմիրաղբյուրում էլ <<Օգնություն անտեսված և անապահով երեխաներին>> ծրագրում ընդգրկված է 30 երեխա:

Էլեկտրոնային տեղեկույթի մատուցման միջոցով ապահովվել է մարզային գրադարանի գրադարանային տեղեկատվական, այդ թվում <<Ինտերնետ համացանցի>>, տեսալսողական նյութերի և էլեկտրոնային հրապարակումների ծառայությունների իրականացման մատչելիությունը:

Տեխնիկապես հագեցված և արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով կառավարվող Դիլիջանի քաղաքային ժամանակակից գրադարանը միաժամանակ ինտերնետ անվճար մուտք գործելու հնարավորություն է ընձեռնում այցելուներին:

Ն. Ծաղկավանի գրադարանը ձեռք է բերել համակարգիչ:

Մարզում գործող երաժշտական դպրոցների ծրագրերում, որպես պարտադիր ստեղծագործություններ ընդգրկված են Հայ արդի և դասական կոմպոզիտորների ստեղծագործություններ / Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Մակար Եկմալյան, Էդուարդ Միրզոյան, Արամ Սաթյան, Ալ.Հարությունյան, Առնո Բաբաջանյան, Ալ.Սպենդիարյան և այլոք/: Հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները ընդգրկված են նաև այս կրթօջախներում գործող համույթների և երգչախմբերի երգացանկերում:

2015թ. կյանքի կոչված Նոյեմբերյանի ժող. թատրոնը շրջագայել է ինչպես Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ համայնքներում, այնպես էլ Իջևանի, Դիլիջանի, Բերդի տարածաշրջանների համայնքներում:

<<Թատերական Լոռի>> 24-րդ միջազգային փառատոնում, որը նվիրված էր Հովհաննես Թումանյանի 150-ամյակին, Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնի <<Ասպարեզ>> թատրոնը (Ռեժիսոր՝ Սամվել Բեգլարյան, տնօրեն՝ Սոնյա Զուրաբյան) ներկայացրեց Ֆիգեյրետոյի <<Եզոպոս>> պիեսը: Թատրոնն արժանացավ հատուկ դիպլոմի և խորհրդանշական հուշանվերի:

Նոյեմբերի 29-ին <<ԱԿՄԻ>> հունական թատրոնի կենտրոնի Ալավերդու տիկնիկային թատրոնը Նոյեմբերյանի Մշակույթի կենտրոնում ներկայացրեց <<Մաշան և արջը>> տիկնիկային շոու-ներկայացումը՝ համանուն մուլտֆիլմի մոտիվներով:

Արդեն ավանդույթ է դարձել մարզում հյուրընկալել Միհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնին:

Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցի կողմից փորձի փոխանակման համերգ է իրականացվել Երևանի Ավան վարչական շրջանի մշակույթի տան հետ համատեղ:

Իրականացվել են նաև վարպետության դասեր Երևանի պետական կոնսերվատորիայի, պետական մանկավարժական համալսարանի դասախոսների հետ:

<<Նախաբեմ>> կրթամշակութային ասոցիացիայի կողմից մասնաճյուղ է բացվել Իջևանում, որտեղ գործում են երգի, պարի և թատերական խմբակներ: Բացված <<Բեմել <<Ս>>>> անվանումով երգի-պարի թատրոն ստուդիայի գործունեությունը կնպաստի մարզի մշակութային կյանքի էլ ավելի աշխուժացմանը:

Մարզպետարանի և համայնքապետարանների հովանավորությամբ մարզում կազմակերպվել են ինչպես ժողովրդական, այնպես էլ ժամանակակից երգիչ-երգչուհիների բազմաթիվ համերգներ, որոնք կայացել են ինչպես դահլիճային պայմաններում, այնպես էլ բացօթյա:

Արվեստին ու մշակույթին հաղորդակցվելու մատչելիությունն ապահովելու նպատակով 2018 թվականին Դիլիջան համայնքի մշակութային կազմակերպություններում ուսանողների, երաժշտական և գեղարվեստի դպրոցների սովորողների ուժերով, Դիլիջանի մշակույթի պալատի <<Սամվել Ղասաբյան և ընկերներ>> խմբի կողմից կազմակերպվել են անվճար համերգներ, ցուցահանդեսներ: Հանգստյան սեզոնին Դիլիջանի Բացօթյա ամֆիթատրոնում կազմակերպվել են ավելի քան 15 միջոցառումներ:

Թանգարանային միջոցառումների ժամանակ այցելությունները կազմակերպվել են անվճար:

Իջևանի ժողգործիքների համույթը տարածաշրջանի գյուղերում կազմակերպել է բարեգործական համերգներ համայնքի բնակիչների համար, պարային կատարումներով հանդես է եկել <<Փյունիկ>> պարային համույթը:

Աջակցություն է ցուցաբերվել <<Մասիս>> ժողգործիքների համույթի /համույթը կազմված է կույր հաշմանդամներից/ մարզում համերգային ծրագրով հանդես գալուն ինչպես մարզի համայնքներում, այնպես էլ հանրակրթական դպրոցներում:

2018 թվականի վերջին՝ Դիլիջանի մշակույթի պալատում նախաձեռնվել է Վոկալ գործիքային համույթի կազմավորման աշխատանքներ: Այժմ խումբը աշխատում է երգացանկի վրա:

Հաշվետու տարում Ալավերդու պատկերասրահում կազմակերպվել է Սաթենիկ Ղուլիջանյանի անհատական ցուցահանդեսը:

<<Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային լարային և փողային նվագարանների գծով ուսուցում>> ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մարզի հենակետային երաժշտական և արվեստի դպրոցներում հանրապետության առաջատար մասնագետների կողմից իրականացվել է ծրագրային մասնագիտական լսումներ:

Կազմակերպվել են մարզի մի շարք համայնքային գրադարանների աշխատակիցների համար գործնական սեմինարներ /Իջևանի մարզային գրադարան/:

Դիլիջանի արվեստի պետական քոլեջի դասախոսական կազմի միջոցով մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում անց է կացրվել վարպետության դասեր, վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական լսումներ, որոնք կոչված են մեթոդական և մասնագիտական օգնություն ցուցաբերելու տեղի մանկավարժներին ու աշակերտներին:

Գեղագիտական դաստիարակության մատչելիության համար այն համայնքները, որտեղ գործում են համապատասխան կրթական կառույցներ, տարբեր զեղչերի համակարգ են մտցրել. Դիլիջանի և Հաղարծինի համայնքները՝ ավագանու որոշմամբ, դպրոց հաճախող այն երեխաների վարձավճարները, որոնք չեն ընդգրկվել ազգային, լարային, փողային նվագարանների պետական փոխհատուցմամբ սովորողների ցուցակում, վճարի փոխհատուցումը վերցրել են իրենց վրա: Այրում համայնքում նախատեսվել է՝ եթե մեկ ընտանիքից երեք երեխա են հաճախում երաժշտական դպրոց, ապա մեկ երեխան սովորում է անվճար, իսկ եթե հաճախող երեխան ցանկանում է սովորել մեկից ավելի բաժիններում և եթե սովորում է գերազանց, ապա մյուս բաժիններում սովորելու վարձավճարը զեղչվում է 50%-ով:

Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցում վարձավճարը 3000 դրամ է:

Կան դպրոցներ, որոնցում վարձավճարը 2500 դրամ է, կան նաև դպրոցներ որտեղ վարձավճարը 5000 դրամ է:

Որոշ դպրոցներ ապահովված են լոկալ ջեռուցման համակարգերով:

Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում դասավանդում են բացառապես մասնագետ կադրեր:

Մարզի շատ համայնքների մշակույթի տներում գործում են տարբեր բնույթի խմբակներ՝ ասմունքի, ժողովրդական և ազգային երգերի, պարի, տարբեր երաժշտական գործիքների ուսուցման, կար ու ձևի, խոհարարական, ասեղնագործության, հեյլունագործության, շյուղագործության, գորգագործական, նկարչական, փայտի փորագրության, խեցեգործության, թատերական և այլ

խմբակներ, որոնք մատչելի են բոլորին /կան կենտրոններ, որոնք ուսուցումը կազմակերպում են անվճար և առանց տարիքային սահմանափակման/ :

Մարզի շատ շնորհալիներ մասնակցություն են ունեցել միջազգային բազմաթիվ մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, շարադրությունների մրցույթների, նկարների և լուսանկարների մրցույթների:

Երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցները գրեթե համալրված են երաժշտական գործիքներով և նյութերով:

2018 թ. Դիլիջանի Մանկական երաժշտական դպրոցը համալրվել է 1 դաշնամուրով /նվիրատվություն/ , Մանկական գեղարվեստի դպրոցը ՝ 1 երաժշտական սարքով և 25 կոմպլեկտ մոլբերտ-տումբայով:

Վերազինման և արդիականացման նպատակով Իջևանի <<Ավանդույթ>> երաժշտական դպրոցին բարեարների միջոցներով տրամադրվել են գործիքներ՝ 5 քանոն, 1 դուդուկ, 2 դաշնամուր /240 000 դրամ/:

Բագրատաշենի երաժշտական դպրոցը ձեռք է բերել համակարգիչ:

Իջևանի երաժշտական դպրոցներում բացված ուդի և թառի դասարաններում ավելանում է աշակերտների քանակը, դպրոցում գործում է երկու երգչախումբ և ժողգործիքների համույթ:

Նպատակ ունենալով Կողբում զարգացնել մանկապատանեկան թատերարվեստը և տիկնիկային թատրոնը՝ <<Կողբի մշակույթի կենտրոնի>> սենյակներից մեկը վերակառուցվել է փոքր թատերական դահլիճի: Կառուցվել է փոքր բեմ, կատարվել է ներքին հարդարման աշխատանքներ, դահլիճը կահավորվել է նստարաններով և աթոռներով:

2018թ. Այրումի երաժշտական դպրոցում բացվել է երգեցողության բաժին:

Աչաջրի երաժշտական դպրոցում Լոս Աջելեսում բնակվող բարեգործներ Շուշան Հակոբյանի և Ռուբեն Աղինյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ բացվել է ջութակի դասարան: Այդ նպատակով բարերարները դպրոցին նվիրել են 10 ջութակ և 4 նոտահարթակ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 383 000 դրամ: Նրանք պարտավորվեցին վճարել ջութակի ուսուցչի աշխատավարձը և 10 աշակերտի վարձավճարը 372 000 դրամ գումար /սեպտեմբեից- դեկտեմբեր/:

2018 թ. Դիլիջանը տնտեսական, տուրիզմի, մշակութային և կրթության ոլորտներում համագործակցության համաձայնագիր է ստորագրել ՌԴ Պյատիգորսկ քաղաքի հետ:

Դրամական միջոցներ է տրամադրել ՀՀ կառավարության ծրագրում ներառված <<Մշակութային կազմակերպություն-դպրոց>> աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրի Երևանում իրականացվող միջոցառումների պատշաճ կազմակերպման նպատակով մարզից տեղափոխվող երեխաներին տրանսպորտային միջոցներով ապահովելու համար:

<<ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ>> արվեստի փառատոնին մարտի 30-ին մասնակցել են մարզի երաժշտական դպրոցների շնորհալի սաները:

2018թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Այրումի երաժշտական դպրոցի <<Տավիղ>> , Կողբի և Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցների ազգային նվագարանների համույթները մասնակցել են ազգային նվագարանների համույթների 2-րդ մրցույթ-փառատոնին, որը նվիրված էր ՀՀ Անկախության 27-ամյակին և

Հայաստանի Երաժշտական Ընկերության հիմնադրման 60-ամյակին ու արժանացել խրախուսական մրցանակների:

Ապրիլին Գյումրիում կայացած <<Վերածնունդ>> միջազգային փառատոնին <<Խմբակային պար>> անվանակարգում Դիլիջանի Հովի. Շարամբեյանի գեղարվեստի դպրոցի պարի խումբը արժանացել է 3-րդ կարգի դափնեկրի, անհատական պար անվանակարգում՝ 3-րդ և 4-րդ կարգի դափնեկրի կոչումներին: Մայիսին մասնակցություն է ունեցել Երևանում կազմակերպված <<Նազանք>> պարի հանրապետական փառատոնին, որտեղ փոքր և միջին տարիքային խմբերը արժանացել են 1-ին կարգի, մեծերի խումբը՝ 2-րդ կարգի մրցանակներին: Հունիսին Հաղարծնի և Թեղուտի պարարվեստի բաժնի երեխաները Ծաղկաձորում մասնակցեցին <<Ծաղկաձոր-2018>> երաժշտական փառատոնին:

Ինչպես մարզում գործող արվեստի և գեղարվեստի, այնպես էլ հանրակրթական դպրոցների աշակերտները մասնակցել են համահայկական մանկապատանեկան նկարչական VIII մրցույթ-փառատոնին, որը նվիրված է եղել Երևանի 2800-ամյակին և անցկացվել է <<Հայոց աշխարհի մայրաքաղաքները>> խորագրով: Մասնակցել են համահայկական <<Սարդարապատից Արցախ>> խորագիրը կրող համահայկական շարադրության և նկարչության մրցույթներին:

Մարզում կազմակերպվել են կրկեսային ներկայացումներ, ինչպես մշակույթի պալատներում, այնպես էլ դպրոցներում, Դիլիջանի ամֆիթատրոնում /Երևանի Պետական կրկես/:

2018 թվականի օգոստոսին ՀՀ Շիրակի մարզպետարանի և <<Արվեստը հանուն խաղաղության>> հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված <<Մինասի գույներով>> խորագիրը կրող <<Երիտասարդ նկարիչների միջազգային հինգերորդ պլեներ>>-ին, որը նվիրված էր ականավոր նկարիչ Մինաս Ավետիսյանին, մարզից մասնակցել են երեք երիտասարդ նկարիչներ:

<<ՄԻՆՈՐԱ>> մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված <<Նազանք>> պարի հանրապետական մրցույթ-փառատոնին փայլուն մասնակցություն են ցուցաբերել Կողբի <<Լուս-Անի>> պարային համույթը՝ գրավելով առաջին պատվավոր տեղը և Զորականի <<Հովեր>> պարային համույթը՝ գրավելով երկրորդ պատվավոր տեղը:

Մարզի համայնքներում գործող մշակույթի տների համույթներն ու անհատ կատարողները ակտիվ մասնակցություն են ունեցել բեմարվեստի ինչպես մանկապատանեկան հանրապետական տարբեր մրցույթ-փառատոներին, այնպես էլ տարածքային և մարզային մրցույթ-փառատոներին՝ արժանանալով դիպլոմների, պատվոգրերի:

Մարզում գործող ժող. նվագարանների լավագույն անհատ կատարողները, երգիչները, Դիլիջանի մշակույթի պալատում գործող փողային նվագախմբի երաժիշտները, մարզի լավագույն ասմունքողները պարբերաբար խրախուսվել են:

Միջազգային մրցույթներում, փառատոներում, ցուցահանդեսներում մրցանակների արժանացած սաները և նրանց դասավանդող ուսուցիչները պարգևատրվել են թե դպրոցների տնօրինությունների, այնպես էլ մարզպետի կողմից տրված պատվոգրերով, հուշանվերներով, շնորհակալագրերով:

Դիլիջան համայնքում բնակվում են բազմաթիվ ստեղծագործողներ, դեկորատիվ կիրառական արվեստի վարպետներ: Նրանց գործունեությունը խթանելու, ոլորտի զարգացմանը նպաստելու նպատակով Հովհաննես Շարամբեյանի անվան ժող. ստեղծագործության կենտրոնի Դիլիջանի մասնաճյուղում 2018 թ. կզմակերպվել են անհատական ցուցահանդեսներ: Մասնաճյուղում ստեղծվել է ցուցահանդես-վաճառքի սրահ, որտեղ տարվա ընթացքում կազմակերպվել են դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների 15 ցուցահանդես-վաճառքներ /Ասեղնագործողներ Էսմա Գրիգորյան, Վարսիկ Գրիգորյան, Արմինե Պողոսյան, Մելանյա Գրիգորյան, փայտարվեստ՝ Գրիգոր Հովսեփյան, Արտուշ Սահակյան, Ռազմիկ Սահակյան, բրուտագործ՝ Արսեն Գոգչյան, գորգարվեստ, գոբելեն՝ Հասմիկ Աղաջանյան, Թագուհի Դավթյան և այլն/: Զբոսայգու տարածքում՝ նորակառույց զբոսաշրջության կենտրոնին կից բացվել է Արվեստների և արհեստների կենտրոն՝ <<Դիլիջանի ձմեռային>> տոնավաճառը: Այն ստեղծվել է Եվրոմիության, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համաֆինանսավորմամբ դրամաշնորհային ծրագրով, որն իրականացնում է <<Հայաստանի զարգացման նախաձեռնություններ>> /IDeA/ հիմնադրամը:

Հադրութում կազմակերպված <<Դիզակի գույները>> միջազգային նկարչական սիմպոզիումին մասնակցեցին 18 նկարիչներ Հայաստանից, Արցախից և Ռուսաստանի Դաշնությունից: Նկարիչների կազմում էին նաև երկու ստեղծագործողներ Կողբի գեղարվեստի դպրոցից:

Պլեների տարածքում անց է կացվել բրուտագործության վարպետաց դաս:

Մարզում անց են կացվել ավանդական արհեստագործության փառատոներ:

Ս/թ Դիլիջանի ամֆիթատրոնում կազմակերպվել է ավանդական արհեստագործության ցուցահանդես-վաճառք:

Մարզում կազմակերպվող շատ տոներ, փառատոներ մշտապես ուղեկցվում են ավանդական արհեստագործության ցուցահանդես-վաճառքներով / ''Մեղրի տոն'',''Բերքի տոն'',''Ոսկե աշուն'' և այլն/:

Հունիսին Ենոքավանում՝ <<Ապագա-տուր>> հանգստյան համալիրում կայացավ ավանդական դարձած Հայկական բույսերի փառատոնը: Այն ամբողջ օրը շարունակվող միջոցառումների շարք է, որ ուղեկցվում է երաժշտությամբ, պարային համարներով, տարբեր մրցույթներով: Փառատոնի բաղկացուցիչ մաս է կազմում նաև բազմաթիվ տաղավարներով տոնավաճառ-ցուցահանդեսը, որտեղ հիմնականում ցուցադրված են լինում ձեռքի աշխատանքներ, բնական միջոցներից, հայկական աշխարհի բույսերից պատրաստված տարբեր քսուկներ, հեղուկներ, յուղեր, թեյեր և այլն: Տոնավաճառի աշխարհագրությունը բավականին լայն է՝ Հայաստանի տարբեր մարզեր և Արցախ:

Հուլիսի 1-ից Կողբում մեկնարկել է մեկամսյա պլեներ-սիմպոզիումը, որին մասնակցում են արվեստագետներ թե Հայաստանի տարբեր մարզերից և թե արտերկրից:

Նոյեմբերյան քաղաքում, Բերդավան, Ոսկեվան և Բաղանիս գյուղերում գործում են փայտամշակման և փորագրության ուսումնական խմբակներ, որտեղ դասավանդում են

տեղի վարպետները, պլանավորվել և անց են կացվել տեղական արհեստագործ վարպետների աշխատանքների ցուցահանդես-վաճառքներ:

Վարպետներին, նրանց ստեղծագործություններին բազմիցս անդրադարձել է թե լրատվությունը, թե հեռուստատեսությունը, ինչպես տեղական նշանակության, այնպես էլ հանրապետական:

2018թ. սեպտեմբերից ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի <<Հզորացնելով երիտասարդների հմտությունները հանուն մարդու իրավունքների և Հայաստանի զարգացման>> ծրագրի աջակցությամբ և ֆինանսավորմամբ Վազաշենում բացվեց 7 կանանցից բաղկացած <<Կանանց ռեսուրս>> կենտրոն, որտեղ զբաղվում են ձեռագործությամբ:

Սահմանամերձ Բերքաբերում ,<<Սահման>> ՀԿ-ի նախաձեռնությամբ կարի նոր արտադրամաս է հիմնվել:

Տնայնագործ ժողովրդական վարպետների ստեղծագործությունների ցուցահանդեսների կազմակերպումը, նրանց մասին տեղեկատվություն տարածելը նպաստել է նոր անհատական արհեստանոցների ստեղծմանը, որի վկայությունն է երիտասարդ վարպետների մասնակցությունը կազմակերպվող միջոցառումներին և ցուցահանդեսներին / Արսեն Գոգչյան, Գրիգոր Հովսեփյան, Անի Ապրեսյան և այլն/:

<<Հայերն ի ծառայություն Ռեչ Պոսպոլիտային. Գրյունվալդից մինչև Մոնտե Կասինո>> ցուցահանդեսի կազմակերպումը հանրապետության մարզերում միտված է Հայ-լեհական բարեկամական կապերի զարգացմանը, որն իրականացվում է ՀՀ-ում Լեհաստանի դեսպանատան նախաձեռնությամբ: Մարտի 5-ին ցուցահանդեսի հերթական հանգրվանը Դիլիջանն էր: Այն բացվել է Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոցում:

Իջևանի <<Ավանդույթ>> երաժշտական դպրոցը հիմնանորոգվել է /մոտ 25 000 ԱՄՆ դոլար/: Այն իրականցվել է Ամերիկայի Միչիգան նահանգի Դետրոյթ քաղաքի <<Վարդանանց Դուստրեր>> Զաբել օթյակի և ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Լիբանանի, Հայաստանի այլ հայազգի բարերարների առատաձեռն աջակցությամբ: Համայնքի բյուջեով դպրոցը գազիֆիկացվել է: <<Շողակն>> անսամբլի կողմից կազմակերպված բարեգործական համերգի հասույթով ձեռք բերված երաժշտական գործիքները / 5 քանոն, 1 դուդուկ , 2 դաշնամուր / նվիրվեցին դպրոցին /մոտ 240 000 դրամ/: Անսամբլը դպրոցում պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ և անց է կացնում սեմինար-պարապմունքներ:

Կազմակերպվել է երիտասարդական ֆլեշ-մոբեր, թատերական բացօթյա միջոցառումներ երեխաների համար:

Նորոգվել և բարեկարգվել է <<Կողբի մշակույթի կենտրոն>>-ի նախասրահը և աստիճանահարթակը:

2018 թ. վերանորոգվել են Բերդավանի երաժշտական դպրոցի 1-ին և 2-րդ հարկերի միջանցքները, վերակառուցվել է դահլիճը:

Հիմնանորգվել են Սևքար համայնքի մշակույթի տան դահլիճը, ճեմասրահը և ևս մեկ սենյակ՝ նախատեսված աշխատակիցների համար: Աշխատանքը կատարվել է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախագծային արժեքը կազմել է 13,004 մլն, շինարարությունն իրականացվել է 12 մլն դրամ մրցութային գնով: Սուբվենցիոն ծրագրերի համար սահմանված կանոնների համաձայն նախատեսված գումարի 60

տոկոսը վճարել է համայնքապետարանը սեփական բյուջեից, իսկ 40 տոկոսը՝ ՀՀ կառավարությունը:

Ինչպես նախորդ տարիներին, 2018 թ. նույնպես համաձայնեցված գործունեություն է կազմակերպվել լիազորված մարմինների / ՀՀ Վարչապետի աշխատակազմի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, ՀՀ մարզպետարանների , ՀՀ համայնքների / հետ:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել ուսման վարձավճարի փոխհատուցմամբ ազգային, լարային և փողային նվագարանների դասարաններում սովորողներ ունեցող երաժշտական և արվեստի դպրոցների վերաբերյալ տեղեկանքներ ըստ դպրոցների՝ համաձայն պահանջվող ձևի /մոնիթորինգ իրականացնելու նպատակով/, ինչպես նաև ներկայացվել է համապատասխան գործունեության վերաբերյալ հաշվետվությունները /ըստ դպրոցների, նույնպես համապատասխան պահանջվող ձևի/:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն է ներկայացվել նախարարության կողմից մշակված <<Կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման համալիր ծրագրի >> հայտը, ըստ օրինակելի ձևի, նշվել է մարզի 2019-2021 թթ. հիմնանորոգման, կառուցման կամ արդիականացման ենթակա մշակութային օբյեկտները:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել մարզի մշակութային միջոցառումների 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը՝ բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումներին համապատասխան:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել արվեստի բնագավառում մեր մարզի շնորհալի երեխաների վերաբերյալ տեղեկույթ:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել տեղեկույթ արվեստի բնագավառում մեր մարզի ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող շնորհալի երեխաների վերաբերյալ:

Մարզային լրատվությամբ և հեռուստատեսությունների միջոցով պարբերաբար տեղեկատվություններ են տրվել, կազմակերպվել են ցուցադրություններ համայնքի տարածքում բնակվող ստեղծագործողների, կազմակերպված մշակութային միջոցառումների վերաբերյալ: Տեղեկատվությունները տեղադրվել են նաև մարզպետարանի և համայնքների կայք-էջերում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ Մ. ՂԱԶՈՒՄՅԱՆ